

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Արման Սամվելի Համբարձումյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսության մեջ բանկային համակարգն ունի առանցքային նշանակության նախ այն իմաստով, որ համարվում է ֆինանսական հոսքերի առանցքային գեներացնողն ու ուղղորդողը, բացի դա, բանկերում առաջացած ճգնաժամերը կարճ ժամանակահատվածում ամենաուղիղ ազդեցությունն են թողնում տնտեսության մյուս հատվածների վրա: Հետևաբար, բանկային ռիսկերի գնահատումը, դրանց վերահսկումը և այդ ուղղությամբ խնդիրների վեր հանումն ու լուծումը ցանկացած ժամանակահատվածում արդիական է:

Երկրներից շատերում կիրառվում են առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի գնահատման տարբեր մոտեցումներ, որոնցից յուրաքանչյուրն ունենալով իր առանձնահատկությունները՝ պարունակում է որոշակի խնդիրներ: Այդ առումով կարևորվում են ռիսկերի հաշվարկման մոտեցումների համադրումներն ու միասնական համալիրում գնահատումը:

Նշված համատեքստում անհրաժեշտ է տարանջատել բանկային վարկերի ուղղությամբ ռիսկերի ուսումնասիրությունը, քանի որ տոկոսադրույքների տատանումների կանխատեսումները և դրանց փոփոխությունների գնահատումը կարելի է համարել բանկերի եկամուտների վրա ֆինանսական ռիսկերի ազդեցության կարևորագույն տարրը: Միաժամանակ, տոկոսադրույքին զուգահեռ պակաս կարևոր չէ

նաև փոխարժեքային տատանումներից ռիսկերի ապահովագրումը և դրանց ազդեցության կանխատեսելիության բարձրացումը:

Իհարկե, ֆինանսական ռիսկերը վերոնշյալով չի սահմանափակվում, քանի որ դրանց զուգահեռ ցանկացած կազմակերպությունում կարող է առաջանալ իրացվելության ռիսկ, իսկ բանկային համակարգում իրացվելիության խնդիրները բացասական ուղիղ ազդեցություն թողնելով բանկերի վճարունակության վրա՝ շղթայաձև կարող են հանգեցնել նաև տնտեսության այլ ոլորտների գործունեության խանգարումների: Հետևաբար, հատկապես բանկային իրացվելի ակտիվների մասով ռիսկերի գնահատման մեթոդների ճիշտ ընտրությունը կարող է համակողմանի պատկերացում տալ ֆինանսական ռիսկերի նաև հետագա վերահսկողական մեխանիզմների մշակման և ռիսկերը որոշակիորեն կառավարելի դարձնելու ուղղությամբ:

Բանկերի ֆինանսական ռիսկերին առնչվող հիմնախնդիրների համակարգային լուծումներից ժամանակակից պայմաններում կարող են լինել նորագույն տեխնոլոգիաներով և դրանց միջոցով այլընտրանքային մոտեցումների ներկայացումը:

Արման Սամվելի Համբարձումյանի ատենախոսությունում վերը հիշատակված հիմնախնդիրների գիտական ուսումնասիրումը, այդ շրջանակներում իրականացված հետազոտությունները և առաջարկված լուծումներն առնչվում են վերոնշյալ դիտարկումներին, որոնցով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ատենախոսության հիմնական նպատակն է ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համակարգի կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացումը:

Նշված նպատակն իրականացնելու համար առաջադրվել են լուծման ենթակա հետևյալ խնդիրները.

- վերլուծել ՀՀ բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման և վերահսկողության գործընթացները,
- ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը կարգավորող ՀՀ և միջազգային իրավական ակտերը՝ ՀՀ առևտրային բանկերի տնտեսական նորմատիվների և ռիսկերի վերահսկողության վերաբերյալ առաջարկություններ կատարելու նպատակով,
- ուսումնասիրել ընթացիկ վերահսկողական սթրես-թեստավորման փորձի արդյունավետությունը՝ ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի բացահայտման և մեղմացման տեսանկյունից,
- դիտարկել բանկերի թվային վերափոխման ընթացքում առաջացող կիբեռանվտանգության ռիսկերը՝ առաջարկելով համապատասխան ռազմավարություններ դրանք արդյունավետորեն մեղմելու համար,
- գնահատել թվային փոխակերպման ազդեցությունը ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության վրա,
- ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերում վարկային ներդրումների կենտրոնացվածության աստիճանը՝ բարձր կենտրոնացումները բացահայտելու նպատակով,
- վերլուծել ՀՀ առևտրային բանկերում կիրառվող կենտրոնացման համաթվերը, բացահայտել հնարավոր խոցելիությունը՝ կենտրոնացման բացահայտումների առումով՝ առաջարկելով կենտրոնացումների գնահատման նոր մոտեցումներ՝ ֆինանսական կայունության մակարդակը բարձրացնելու նկատառումով:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն է ՀՀ առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգի կատարելագործմամբ ֆինանսական ռիսկերի կանխարգելման նոր մոտեցումների մշակումը: Մասնավորապես, ատենախոսությունում.

➤ բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգում ֆինանսական ռիսկերի ճանաչման և գնահատման առանձնահատկությունները և դրանց հիման վրա առաջարկվել է ռիսկերի վերահսկողության իրականացման բարելավված գործիքակազմ՝ գործոնային համապարփակ վերլուծական հիմքով,

➤ հիմնավորվել ու հստակեցվել են վերահսկիչ սթրես-թեստավորման կիրառման անհրաժեշտությունն ու ուղղությունները՝ որպես ՀՀ բանկերում ռիսկերի համապարփակ գնահատման և մեղմացման գործիք: Ապացուցվել է, որ տարբեր սթրեսային սցենարների միաժամանակյա մոդելավորմամբ հնարավոր է ավելի ամբողջական պատկերացում կազմել բանկերի առջև ծառայած ռիսկերի վերաբերյալ, բացահայտել խոցելիության աստիճանը, ինչպես նաև մշակել ռիսկերի կառավարման համապատասխան ռազմավարություն՝ միտված բանկերի ճկունության և ֆինանսական կայունության ապահովմանը,

➤ մշակվել և առաջարկվել է ֆինանսական ռիսկերի դիվերսիֆիկացման գնահատման մոտեցում, հիմք ընդունելով Հերֆինդալ-Հիրշմանի, Լինդայի և Էնթրոպիայի գործակիցների վերլուծական փոխընդհանուր արդյունքները, որի միջոցով ՀՀ առևտրային բանկերը հնարավորություն կունենան արդյունավետ վերահսկելու տնօրինվող ակտիվների տեղաբաշխման ճյուղային կառուցվածքն ըստ բնութագրիչ ռիսկերի,

➤ մշակվել է առևտրային բանկերի գործունեության թվային փոխակերպման գործընթացում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության ճկուն համակարգ, որով հնարավորություն է ստեղծվում բարելավելու վերահսկողական

գործընթացները և միաժամանակ բացահայտելու ֆինանսական միջնորդության էկոհամակարգի արտաքին ու ներքին ռիսկային մարտահրավերները:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը շարադրված է 157 էջի վրա՝ առանց հավելվածների, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից, և հավելվածներից:

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, և այս ամենի հիման վրա ներկայացվել են հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ **«Առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերահսկողության տեսամեթոդական հիմքերը»** գլխում հեղինակի կողմից ուսումնասիրվել և ներկայացվել են ինչպես ամբողջ աշխարհում գոյություն ունեցող բանկային ֆինանսական ռիսկերին առաջադրվող հիմնախնդիրները, այլև դրանք զուգահեռվել են ՀՀ առևտրային բանկերի նույնատեսակ խնդիրների հետ: Այս գլխում հիմնականում անդրադարձ է կատարվել բանկերին առնչվող շուկայական ռիսկերին՝ դիտարկումը կատարելով տոկոսադրույքի և արտարժույթային ռիսկերի համատեքստում, ներկայացվել է տարբեր երկրներում կիրառվող բանկային վերահսկողության շուկայական ռիսկի գնահատման VaR հայեցակարգը՝ իր տարբեր մոդելներով: Միաժամանակ, ուսումնասիրության առարկա են դարձել վարկային և իրացվելության ռիսկերը՝ քննարկելով վարկային ռիսկերի կառավարման տարբեր մոդելներ, ներկայացնելով դրանց հաշվարկների առանձնահատկությունները: Զուգահեռաբար մանրամասն ներկայացվել են բանկերի ակտիվների իրացվելության գնահատականները և դրանց փոփոխությունների ազդեցությունը ֆինանսական ռիսկերի վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը»** գլխում ներկայացվել և ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ առևտրային բանկերում առկա ֆինանսական ռիսկերի կառավարմանն առնչվող խնդիրները: Այս գլխում վերլուծվել են որոշ բանկերի ակտիվների և պարտավորությունների միջին տոկոսադրույքները՝ փորձելով գնահատել տոկոսադրույքի հետ կապված ռիսկերը, և առանձնակի մոտեցում է ցուցաբերվել արտարժույթային ռիսկի հաշվարկման ուղղությամբ՝ վերլուծությունները կատարելով ՀՀ 4 առևտրային բանկերի տվյալներով: Անդրադարձ է կատարվել ՀՀ ԿԲ կանոնակարգերի միջոցով առևտրային բանկերում իրացվելիության ռիսկի կառավարման կարևորությանը՝ վերլուծությունների հիմքում ներառելով ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության փոփոխությունները: Միաժամանակ, վարկային ռիսկերի գնահատման հիմքում դնելով սթրես-թեստավորման մոտեցումը, կատարվել է ՀՀ առևտրային բանկերի չաշխատող վարկերի գնահատում՝ դրանք համադրելով տարբեր երկրների նույնատիպ ցուցանիշների հետ: Իսկ սթրես-թեստավորումն իրականացվել է հավանական սցենարների դիտարկման շրջանակներում՝ ստանալով պայմանական արդյունքային ցուցանիշներ: Բացի այդ, հեղինակը մոդելավորման միջոցով ստացել է վարկային ռիսկ կրող ակտիվների վրա տարբեր գործոնների, այդ թվում՝ մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը՝ ռեգրեսսաների միջոցով ստանալով կորելացիոն մատրիցա:

Ատենախոսության երրորդ՝ **«Ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության հեռանկարային միտումները և բարելավման ուղիները»** գլխում ուսումնասիրելով համաժամանակյա սթրես-թեստավորման միջազգային փորձը ներկայացվել է ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի գնահատման սթրես-թեստավորման համակցված մոտեցում՝ առաջարկվել է բանկերում չաշխատող ակտիվների պատճառով առաջացող ռիսկերի գնահատման նպատակով կիրառել համակցված մոտեցում: Խոսքը վերաբերում է աշխարհի տարբեր երկրներում կիրառվող «Top-down» և «Bottom-up» մոտեցումներով համաժամանակյա վերլուծությանը, ինչի արդյունքում մոտեցումներից յուրաքանչյուրի բացերը լրացվում են մյուս մոտեցման կիրառմամբ: Այս գլխում հեղինակի

կողմից կարևորվելով նորագույն տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը, ներկայացվել է ռիսկերի գնահատման թվայնացման կարևորությունն ու անհրաժեշտությունը, նորագույն մեթոդներով այս ուղղությամբ բացահայտված հիմնախնդիրների լուծումը: Նշվածն ամբողջացել է արհեստական բանականության միջոցով ռիսկերի վերահսկողության մեխանիզմների ներդրման անհրաժեշտության կարևորության մեջ: Միաժամանակ, կարևորելով տնտեսության առանձին ոլորտներում վարկային ակտիվների կենտրոնացվածության գնահատումը կատարվել են համապատասխան վերլուծություններ՝ գնահատելով վարկային ռեսուրսների առավել կենտրոնացվածության աստիճանը որոշ ոլորտներում: Կենտրոնացվածության աստիճանի գնահատման նպատակով կիրառելով Հերֆինդալ-Հիրշմանի համաթիվը, այն համակցվել է Լինդայի և Էնթրոպիայի համաթվերի հետ՝ փորձելով համակցության միջոցով փակել յուրաքանչյուր մոտեցման թերությունները:

**«Եզրակացություններ»** բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի հիմնախնդիրների լուծման մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված բանկերում ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ ԿԲ և առևտրային բանկերում՝ նպաստելով ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության բարելավմանը:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այնուհանդերձ, աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից.

1. Ատենախոսության 1-ին գլխում հեղինակը բանկերի շուկայական ռիսկերի գնահատման մասով մեծ կարևորություն է տվել VaR մոդելների օգտագործմանը: Սակայն, նույն գլխում բավական մանրամասնորեն ներկայացնելով այդ հայեցակարգի գծային մեթոդի հաշվարկի մեթոդաբանությունը՝ նշում է դրա միջոցով ռիսկերի գնահատման մի շարք թերությունների մասին, մասնավորապես՝ ակտիվների իրական շուկայական արժեքի հաշվարկի տեսանկյունից, դրանով նաև միջին արդյունքների ոչ ճշգրիտ ստացման մասին: Այդպիսով, կարծես հակասության մեջ է դրվում մինչ այդ ներկայացված այդ հիմքով ռիսկերի գնահատման կարևորության թեզը: Միաժամանակ, նշված մոդելի հավաստիության հիմնավորման նպատակով Հավելված 1-ում և Հավելված 2-ում բերվել են հաշվարկման վերլուծություններ ոչ թե կոնկրետ բանկերի տվյալներով, այլև կիրառվել են պայմանական օրինակներ՝ ոչ հավաստի տվյալներով:

2. Ատենախոսության 1.2 ենթագլխում հեղինակը ներկայացնելով առևտրային բանկի իրացվելիության գնահատականները նշում է, որ բանկը որպես բարձր իրացվելի ակտիվներ ներդրումներ է կատարում պետական պարտատոմսերում, որոնք ըստ հեղինակի այնքան էլ ապահով չեն (էջ 35): Սակայն, հեղինակը չի հիմնավորում այդ տեսակետը հատկապես այն պարագայում, երբ մինչ այդ տարբեր մասնագետներ ներկայացնում են հակառակը, այդպիսով ձևակերպումը դարձնելով խոցելի:

3. Ատենախոսությունը կշահեր, եթե 1.2 ենթագլխում հեղինակի կողմից ներկայացված վարկային և իրացվելիության ռիսկերի գնահատման մոդելները (Մերտոնի, KMV վարկային վերահսկողության, MOODY'S PUBLIC FIRM, CreditMetrics մոդելներ) և դրանց հաշվարկների տարբեր մոտեցումները հաջորդ գլուխներում ամբողջությամբ կիրառվեին ՀՀ բանկերի ռիսկերի գնահատման ժամանակ և դրանց միջոցով ստացված արդյունքներով ևս կատարվեին ֆինանսական ռիսկերի վերաբերյալ եզրահանգումներ:

4. Ատենախոսության թեման վերնագրված է «*«ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կադրերի զարգացման հիմնախնդիրները»*», սակայն հետազոտության տարբեր մասերում հեղինակն անդրադառնում է ՀՀ գործող ընդամենը 4, 8, կամ 10 բանկերի ցուցանիշների վերլուծությանը, այդպիսով վերլուծության արդյունքները պրոեկտելով ՀՀ բոլոր առևտրային բանկերի վրա: Նույն մոտեցումն առկա է նաև Հերֆինդալ-Հիրշմանի համաթվի միջոցով կենտրոնացվածության չափման ժամանակ 8 բանկերի ցուցանիշների գանահատման ժամանակ: Աշխատանքում ներկայացված վերլուծության ենթարկվող բանկերի ընտրանքի մեթոդաբանությունը հիմնավորված չէ: Հետևաբար, որոշ վերլուծությունների ժամանակ ՀՀ գործող բանկերից մի քանիսի ցուցանիշների վերլուծությունների հիման վրա համակարգային գնահատականը կարող է շեղվել իրական պատկերից, ինչով պայմանավորված կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե վերլուծվեին ՀՀ գործող բոլոր առևտրային բանկերի համանման ցուցանիշները և դրանց հիման վրա կառուցվեին եզրակացությունները:

5. Աշխատանքի 2.3 ենթագլխում հեղինակի կողմից կատարվել են վարկային ռիսկեր կրող ակտիվների վրա մակրոտնտեսական ազդեցությունների վերլուծություններ, սակայն չեն հստակեցվել, թե որ բանկերի մասով են համապատասխան հաշվարկները կատարվել. արդյոք ՀՀ բոլոր առևտրային բանկերի ցուցանիշներն են հիմք հանդիսացել ռեգրեսիոն վերլուծության համար, թե նախորդ բաժինների սկզբունքով կատարվել է բանկերի որևէ ընտրանքային մոտեցում: Աշխատանքում աղյուսակների կամ հավելվածների տեսքով բացակայում է ռեգրեսիայի համար հիմք հանդիսացած սկզբնական տվյալների ներկայացումը:

6. Ատենախոսության 1-ին գիտական նորույթը շարադրված է՝ «*Բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգում ֆինանսական ռիսկերի ճանաչման և գնահատման առանձնահատկությունները և դրանց հիման վրա առաջարկվել ռիսկերի վերահսկողության իրականացման բարելավված գործիքակազմ՝ գործոնային համապարփակ վերլուծական հիմքով*»: Սակայն, արդյո՞ք այդ ռիսկերի ճանաչման և գնահատման առանձնահատկությունները բացահայտվել են հեղինակի

կողմից, թե դրանք մինչ այդ բացահայտված են եղել: Կարծում ենք, որ նշված նորույթը խմբագրման կարիք ունի:

7. Ատենախոսության 3.1 ենթագլխում հեղինակն առաջարկում է ՀՀ առևտրային բանկերում ռիսկերի գնահատման և մեղմացման համար կիրառել աշխարհում արդեն գոյություն ունեցող վերահսկիչ սթրես թեստավորումը, և որպես դրա ներդրման արդյունավետության գնահատում՝ ներկայացնում է ԵՄ օրինակը: Քանի որ գիտական 2-րդ նորույթը կառուցված է այս մոտեցման վրա, որը մինչ ներկայացված աշխատանքն արդեն իսկ կիրառվում էր տարբեր երկրներում, իսկ ատենախոսության մեջ ՀՀ առևտրային բանկերի ցուցանիշներով ուսումնասիրված չէ և ՀՀ-ում կիրառման տեսանկյունից հիմնավորվածությունն ամբողջական չէ, ապա կարծում ենք, որ ատենախոսության թեմայի տեսանկյունից ՀՀ առևտրային բանկերի մասով մոտեցումը դեռևս անհրաժեշտություն ունի վերլուծության և փորձարկման, հետևաբար՝ դեռևս վերջինիս հիմնավորումն ամբողջական չէ: Նշվածով պայմանավորված առաջարկվում է վերաձևակերպել 2-րդ նորույթը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողությունները չեն ազդում ատենախոսի կողմից իրականացրած հետազոտության արդյունքների վրա, և նպատակ են հետապնդել ատենախոսությունում «Հ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման հիմնախնդիրների լուծման վերաբերյալ իրականացված առաջարկությունները և վերլուծությունները ծառայեցնելու իրենց վերջնական նպատակին:

Ամփոփելով կարելի է հավաստել, որ ատենախոս Արման Սամվելի Համբարձումյանի կողմից կատարվել է արդիական, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի հետազոտություն: Վերջինիս «Հ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես պատշաճ մակարդակով կատարված ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ վեր են հանվել Հ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերահսկման անհրաժեշտությունը և հնարավորությունները: Վերլուծության արդյունքում ատենախոսի կողմից առաջադրվել են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատարակման պահին ընդունելի ու գրախոսվող հանդեսներում և ժողովածուներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին ու ատենախոսության բովանդակությանը համապատասխան և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Արման Սամվելի Համբարձումյանի՝ «Հ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի

